



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԱՏԱՂՈՐՀՆԷՔ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Շաբաթ, 30 Յունուարը մեր տօնացոյցին համաձայն տօնն է Ս. Սարգիս Չորավարին:

Ս. Սարգիսի տօնին առթիւ, Շաբաթ ժամը 7:30ին, երեկոյեան ժամերգութիւն պիտի կատարուի Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ:

Կիրակի, 31 Յունուարին, Ս. Սարգիս եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առթիւ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ մատաղօրհնէք պիտի կատարէ Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ:

Շանթօ աւանդութիւնն է որ Առաջաւորաց պահքին առիթով եւ Ս. Սարգիսի տօնին շաբթուան սկիզբը, ուխտաւորներ երեք օր ծոմ կը պահեն ու կ'աղօթեն, որ Ս. Սարգիսը իրականացնէ իրենց ուխտը:

Ծոմապահութիւնը սկսած էր Կիրակի, 24 Յունուարի կէս գիշերին եւ շարունակուեցաւ մինչեւ Չորեքշաբթի, 27 Յունուար:

Չորեքշաբթի, 27 Յունուարի առաւօտեան, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ Առաջաւորաց պահքի խաչահանգիստ եւ ջրօրհնէք կատարուեցաւ, որմէ ետք հաւատացեալ ծոմապահները Ս. Հաղորդութիւն եւ օրհնուած ջուր ստացան:

EPISCOPAL DIVINE LITURGY AND BLESSING OF MADAGH ON THE NAME DAY OF ST. SARKIS CHURCH

Saturday, January 30th, 2010 is the Feast of St. Sarkis, which is also the name day of St. Sarkis Church in Pasadena. On this occasion, evening services will take place at St. Sarkis Church on Saturday evening.

On Sunday morning, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and conduct the blessing of madagh at St. Sarkis in honor of the name day of the church.

The Sunday preceding St. Sarkis is the eve of the Fast of the Catechumens, when faithful fast for three days in fulfillment of their prayers. The fast lasted until Wednesday morning when faithful gathered at Prelacy churches to receive Holy Communion and blessed water.

ՀԱՅ ԿՆՈՋ ՏԱՐՈՒՄՆ ԱՌԻԹՈՎ

ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ՝ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՅԱՐԿԻՆ ՏԱԿ

Նկատի ունենալով, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս 2010 տարին հռչակած է Հայ Կնոջ Տարի, Թեմիս մէջ նախատեսուած են շարք մը հանդիսութիւններ ու ձեռնարկներ, վեր առնելու համար Հայ Կնոջ դերն ու առաքելութիւնը՝ մեր ընտանեկան եւ ազգային-հասարակական կեանքերուն մէջ:



Այս ծիրին մէջ, Ազգային Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը եւս ծրագրած է շարք մը ձեռնարկներ, որոնց բացումը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 28 Յունուարի կէսօրին, Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ:

Ձեռնարկը դասախօսական հանդիպում մըն էր, որուն կ'ընկերանար նաեւ ճաշկերոյթ: Ձեռնարկը կը վայելէր Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի հովանաւորութիւնն ու նախագահութիւնը: Ներկայ էին մօտաւորապէս 150 տիկիներ, ի շարս որոնց՝ մեր եկեղեցիներու տիկնանց միութեանց անդամներ ու ՀՕՄԻ ներկայացուցիչներ:

Մեղանի օրհնութիւնը կատարեց Առաջնորդ Սրբազան Հայրը:



Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին անունով, ողջոյնի խօսք արտասանեց Մարմինին ատենապետուհին՝ Տիկին Մարիամ Կարապետեան, անդրադառնալով հանդիպումի առիթին ու մէջբերումներ ներկայացնելով Վեհափառ Հայրապետին պատգամէն:

Բանախօսն էր ծանօթ գրագետ եւ մտաւորական Տիկին Սոնա Չէթլեան, նիւթ ունենալով

«Հայ Կնոջ դերը Հայ Կեանքին մէջ, անցեալին եւ այսօր»: Ան առաջին հերթին նկատել տուաւ, որ Վեհափառ Հայրապետին այս ու նմանօրինակ տարեկան պատգամներուն նպատակն է խորացնել ազգային գիտակցութիւնը ու բարձրացնել հաւաքական մտածողութեան մակարդակը: Ան նշեց, որ Հայ Կնոջ Տարուան առիթով, անհրաժեշտ է վեր առնել հայ կնոջ դերակատարութիւնը ազգային տարբեր բնագաւառներու մէջ, ի մտի ունենալով դարաւոր այն իմաստութիւնը, ըստ որուն, առողջ հայրենիքի մը հիմքը կը կազմէ առողջ ընտանիքը, իսկ կինը գլխաւոր սիւնն է ընտանիքին ու անոր զօրութեան: Ան

ներկաներուն ուշադրութեան յանձնեց մեր պատմութեան լուսաւոր ու մութ փուլերը, ուր հայ կինը անփոխարինելի դերակատարութիւն ունեցած է ազգային կեանքի ու հայրենիքի եւ ժողովուրդի պահպանման մէջ, սկսելով մեր ժողովուրդի նախաքրիստոնէական օրերէն, անցնելով քրիստոնէացումին յաջորդած հանգրուաններէն եւ մեր ազգային զարթօնքի շրջանէն, հասնելով մեր ներկայ օրերը: Ան շեշտեց, որ հայ կինը իր կարելոր բաժինը ունեցած է ազգային ինքնութեան պահպանման ու փոխանցման մէջ, դերակատար եղած է իբրեւ ազգային ու բարոյական դաստիարակ, անփոխարինելի եւ իւրայատուկ գործ տարած է ընկերային կամաւոր ծառայութեան դաշտերու մէջ, իր վաստակն ու եռանդը ի սպաս դնելով մեր ժողովուրդին, Հայրենիքին: Ան մասնաւորապէս յիշատակեց ՀՕՄԻ ծառայութիւնները, նշելով, որ ՀՕՄը այս տարի պիտի տօնակատարէ իր հիմնադրութեան 100րդ տարեդարձը:

Իր խօսքի վերջին բաժինով, Տիկին Ս. Չէյթլեան կանգ առաւ շարք մը մարտահրաւերներու վրայ, որոնց դիմաց կը կանգնի Հայ Կինը: Ան յիշեցուց, որ Հայաստանի անդրանիկ հանրապետութեան օրով, հայ կնոջ արդար վարձատրութիւն մը եղաւ քուէարկելու իրաւունքը, ու մեր հայրենիքը եղաւ նման քայլ առնող աշխարհի առաջին պետութիւններէն: Իսկ 21րդ դարու սեմին, անոր վաստակը պիտի արժեւորուի՝ անոր մարդկային ու ազգային իրաւունքները շեշտելով: «21րդ դարու հայ կնոջ մարտահրաւերը, անձնական թէ ազգային մակարդակի վրայ, իրաւունքներու եւ պարտականութիւններու սկզբունքով առաջնորդուիլն է, ու իբրեւ քաղաքացի՝ ներդրում ունենալն է, միշտ նկատի ունենալով մեր ազգային ուխտը՝ առողջ ընտանիք, հզօր հայրենիք», եզրափակեց ան:

Դասախօսութեան աւարտին, ասմունքով ելոյթ ունեցաւ Ազգային Առաջնորդարանի Տիկնանց Միութեան անդամներէն Տիկին Սալբի Սրուրեան, արտասանելով Հայ Մօր Նուրուած բանաստեղծութիւն մը:



Եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը: Ան առաջին հերթին յայտարարեց, որ Կայ Կնոջ Տարուան մասին Վեհափառ Հայրապետին պատգամը մեր եկեղեցիներուն մէջ պիտի ընթերցուի Կիրակի, 21 Փետրուարին, յընթացս Ս. Պատարագի: Ապա ան վեր առաւ մեր հաւաքական ու ազգային կեանքի մակարդակին բարձրացման մէջ հայ կնոջ

վերապահուած դերը, ընդգծելով, որ անհատական վերելքները պէտք է նպաստեն հաւաքական վերելքին: Ան անդրադարձաւ հայ կնոջ այլազան առաքելութիւններուն՝ իբրեւ մայր, ընտանիքի սիւն, դաստիարակ եւ ազգապահպանման գործօն: Ան յիշեցուց, որ դարերու ընթացքին ու մինչեւ այսօր, հայ կնոջ համար օրինակելի տիպար է Աստուածամայրը, որ իր զոհաբերութեամբ ու կենցաղով առաջնորդ մը կը հանդիսանայ մտածելակերպի ու ապրելակերպի: Առաջնորդ Սրբազանը նաեւ անդրադարձաւ արդարութեան գիտակցութեան

հրամայականին, շեշտելով որ ինքնաքննադատութեան ու ինքնասրբագրումի ճամբով, պէտք է նպաստել ազգային գիտակցութեան ու բարոյական արժէքներու բարձրացման: Վերջապէս, Առաջնորդ Սրբազանը անհրաժեշտ նկատեց հեռու մնալ խտրական մտտեցումէ եւ հայ կինը իբրեւ հաւասարի ու ամբողջական իրաւունքներով տեսնել մեր հասարակական կեանքին ու ընտանեկան յարկերուն մէջ:

YEAR OF THE ARMENIAN WOMAN KICKS OFF WITH A LITERARY LUNCHEON AT THE PRELACY

In response to the proclamation by H.H. Catholicos Aram I declaring 2010 the Year of the Armenian Woman, a number of events will take place within the Western Prelacy throughout the year to honor the role and contributions of the Armenian woman.

The celebration of the Year of the Armenian Woman kicked off on Thursday, January 28th, 2010, with a literary luncheon at the Prelacy “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and organized by the Ladies Auxiliary.

The hall was filled to capacity as nearly 150 women had gathered for the event. Following the invocation by the Prelate, Ladies Auxiliary Chair Mrs. Mariam Karapetian delivered the welcoming remarks, in which she spoke of the purpose of the gathering, which is the first in a series to be held throughout the year, and cited passages from the Pontifical message on the value of the Armenian woman.

The keynote speaker was renowned author and scholar Mrs. Sona Zeitlian, who presented the topic “The Role of the Armenian Woman in Armenian Life: Past and Present”.



Mrs. Zeitlian firstly noted that this and past proclamations by His Holiness serve to broaden our knowledge and foster our collective intellect as a community. She stressed that in honor of the Year of the Armenian Woman, it is imperative that proper recognition be given to Armenian women for their role as the pillars of our families, given that healthy families are the foundation of healthy and strong societies. She reflected on

the monumental responsibilities Armenian women have taken on in our history, from pre-Christian times to the present-day, as defenders and promoters of our national identity, instillers of our religious and national values, and their contributions to our homeland and people through social service organizations such as the Armenian Relief Society which this year will be celebrating its centennial.

In conclusion, Mrs. Zeitlian touched upon challenges facing Armenian women. She reminded the guests that in the days of the First Republic of Armenia, women had the right to vote, which was not a widespread phenomenon for that time. In the 21st century, the challenge for the Armenian woman is to lead a life cognizant of her rights and responsibilities, and of her input in society, all the while bearing in mind the all-important truth of a healthy family yields a strong society.

The cultural program included a recitation by Ladies Auxiliary member Mrs. Salpi Srourian of a poem dedicated to Armenian mothers.

The event concluded with the Prelate's message. The Prelate first informed the guests that the Pontifical Message of the Year of the Armenian Woman will be read in Prelacy Churches on Sunday, February 21st. The Prelate exalted the invaluable contributions of Armenian women in our national life, and their multifaceted roles as mothers, pillars of our families, educators, nurturers, and preservers of our culture and traditions. He noted how centuries on, Armenian woman continue to look to the Holy Mother of God, and the sacrificial and virtuous life she lived, for inspiration and guidance. In conclusion, the Prelate stressed the great importance of the Armenian woman as an equal contributor to our collective lives and communities.

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ ՖՐԵՉԼՈՅԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ 109ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ԱՌԻԹՎ

Կիրակի, 24 Յունուարին, Ֆրեզլոյի Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ 109ամեակին առիթով, եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ, ապա եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ եկեղեցւոյ տարեկան ձեռնարկը:



Թեմիս քարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ մատուցեց, իր պատգամը փոխանցեց եւ սարկաւագական ձեռնադրութիւն կատարեց Ս. Երրորդութիւն Մայր եկեղեցւոյ մէջ:

Ս. Խորանին սպասարկեց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վահան Զինյ. Կոստանեան:

Յընթացս Ս. Պատարագի, Առաջնորդ Սրբազանը սարկաւագ ձեռնադրեց Պերճ Աբգարեանը, որ

տարիներէ իր վեր կը ծառայէ եկեղեցւոյ, որպէս դպիր եւ կիսասարկաւագ:

Ապա, Սրբազան Յայրը օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը տուաւ ներկայ հաւատացեալներուն եւ Կիրակնօրեայ վարժարանի աշակերտներուն, վեր առնելով 109 տարեկան եկեղեցւոյ դերակատարութիւնը՝ ոչ միայն Ֆրեզլոյի, այլ նաեւ ամերիկահայ գաղութի կեանքին մէջ:

Պատարագէն վերջ, եկեղեցւոյ տարեդարձին առիթով, հոգեւոր հովիւն ու հոգաբարձութիւնը եկեղեցւոյ սրահին մէջ կազմակերպած էին պաշտօնական ճաշկերոյթ եւ տօնակատարութիւն: Ձեռնարկը կը վայելէր Առաջնորդ Սրբազան Զօր հովանաւորութիւնն ու ներկայութիւնը:

Հոգաբարձութիւնը այս առիթով պատուեց չորս անձնաւորութիւններ, եկեղեցւոյ իրենց մատուցած բազմամեայ ծառայութեան համար. անոնք էին Իլէյն Սուտճեան, Միլտրըտ Շիրին, Պաղտասար եւ Դարճիան Պետոյեան եղբայրները: Հոգաբարձութիւնը գնահատեց նաեւ Կիրակնօրեայ վարժարանի նուիրեալ երիտասարդներէն՝ Յակոբ Օհաննեսեանը:

Ընդառաջելով եկեղեցւոյ Հովիւնին եւ հոգաբարձութեան խնդրանքին, Առաջնորդ Սրբազան Հայրը այս առիթով գնահատանքի արժանացուց Բարշ. Սիեր Սարկաւազ Շիւրտըմեանը, սարկաւազական ձեռնադրութեան տարեդարձին եւ Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ 50ամեայ ծառայութեան համար:

Եւստի, որ Տիար Շիւրտըմեան նաեւ թեմական եւ ուսումնական համակարգին մէջ երկար տարիներու ծառայութիւն ունի, եղած է անդամ Ազգ. Երեսփոխանական Ժողովին եւ Ազգ. Առաջնորդարանի Մարմիններու:

Գեղարուեստական յայտագրի բաժինով, եկեղեցւոյ տարեկան գործունեութիւնը ներկայացնող տեսաերիզ մը ցուցադրուեցաւ:

Ս. Պատարագին ու յաջորդող ընդունելութեան ներկայ եղաւ նաեւ Ազգ. Վարչութեան անդամներէն Տիար Վարուժան Տէր Սիմոնեան:

PRELATE CELEBRATES DIVINE LITURGY AT HOLY TRINITY CHURCH IN FRESNO ON THE 109TH ANNIVERSARY OF THE CHURCH

On Sunday, January 24th, 2010, Holy Trinity Church in Fresno marked its 109th anniversary with Divine Liturgy celebrated by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, followed by the annual banquet. Parish pastor Rev. Fr. Vahan Gosdanian assisted at the altar.



During Divine Liturgy, the Prelate ordained long-time church servant Berj Apkarian a deacon.

At the conclusion of the service, the faithful gathered in the church hall for the annual banquet, organized by the Pastor and Board of Trustees. Each year during the banquet, individuals are honored for their service and dedication to the church and its endeavors. This year's honorees were Allen Soujian, Mildred Shirin, and Baghdasar and

Tarjian Bedoian brothers. The Pastor and Board also honored Hagop Ohanessian for his service within the Sunday School.

During the event, Deacon Meher Chekerdemian received special recognition from the Prelate on his 50th anniversary as a deacon. Mr. Chekerdemian is a decades-long servant of Holy Trinity Church and the Fresno community, and has also served as a delegate and a member of Prelacy committees.

The program also included a video presentation of the church's past year's activities.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Երեքշաբթի, 26 Յունուարի երեկոյեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց Հայկական Ոսկրածուծի Հիմնադրամը ներկայացնող պատուիրակություն մը, որ կազմակերպութեան նախագահ Տոքթ. Ֆրիտա ճորտընի գլխաւորութեամբ Ազգ. Առաջնորդարան եկած էր Առաջնորդ Սրբազանը տեղեակ պահելու իր տասնամեակին առիթով նախատեսուած ձեռնարկներուն ու աշխատանքներուն: Հանդիպումին ներկայ եղաւ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան:



Հայրենի ժողովուրդին բժշկական ու բժշկագիտական իրայատուկ օժանդակութիւն հասցնող այս հիմնադրամը հիմնականին մէջ ծառայութիւն կը մատուցէ դժուար բուժելի հիւանդներու: Անկա Հայաստանի մէջ հաստատած է կեդրոն մը, որուն համար նպաստ կ'ապահովէ սփիւռքեան ու յատկապէս Միացեալ Նահանգներու հայկական օճախներէն, արձանագրելով ոսկրածուծի

պատուաստումի համար կամաւոր թեկնածուներ:

Պատուիրակութեան անդամները Առաջնորդ Սրբազանին տեղեկութիւններ հաղորդեցին իրենց աշխատանքներուն ընթացքին մասին, որուն նորագոյն օղակը կազմուած է տարեսկիզբին, Արցախի մէջ, ուր պետական եւ հոգեւոր պատասխանատուներ անձանագրուած են Հիմնադրամի ցանկին:

Նկատի ունենալով, որ Հիմնադրամը այս տարի կը բոլորէ իր տասներորդ տարին, վարչութիւնը որոշած է կազմակերպել շարք մը ձեռնարկներ ու քարոզչական արշաւներ, որոնք մեկնարկի հանդիպումը տեղի պիտի ունենայ 9 Փետրուարի երեկոյեան, «Ֆենիսիա» ճաշարանին մէջ: Պատուիրակութիւնը ինդրեց Առաջնորդ Սրբազանէն, որ Ազգ. Առաջնորդարանը, մեր եկեղեցիներն ու Ազգ. Վարժարանները նեցուկ կանգնին այս աշխատանքներուն:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց Հայկական Ոսկրածուծի Հիմնադրամին առաքելութիւնը ու անոր նուիրեալներուն ծառայութիւնները: Ան վերահաստատեց Ազգ. Առաջնորդարանին ու անոր հովանիին տակ գործող

միաւորներուն զօրակցութիւնը՝ այս աշխատանքներուն, նշելով, որ ընթացք պիտի տրուի ներկայացուցած խնդրանքին: Պատուիրակութիւնը շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազանի ու Ազգ. Առաջնորդարանի հետեւողական աջակցութեան համար:

PRELATE WELCOMES ARMENIAN BONE MARROW DONOR REGISTRY REPRESENTATIVES

On the evening of Tuesday, January 26th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy a delegation from the Armenian Bone Marrow Donor Registry (ABMDR), headed by Board of Director's president Dr. Frieda Jordan. Joining the Prelate at the meeting was Very Rev. Fr. Muron Aznikian.



The delegation had come to keep the Prelate abreast of the events planned for the organization's 10th anniversary which will be celebrated this year.

The guests informed the Prelate of the organization's recent endeavors, including a donor recruitment drive which took place in Artsakh at the start of the year.

The organization is planning a number of events throughout the year to mark its 10th anniversary, the first of which is a kick-off to take place on February 9th, at Phoenicia Restaurant.

The Prelate highly commended the mission of the ABMDR and the dedication of the volunteers who are devoted to this cause. He reaffirmed that the Prelacy and all bodies under its jurisdiction remain committed to this cause and will lend their support wholeheartedly, for which the representatives expressed their thanks to the Prelate.
